

ՀԱՆԳԻՍՏ Տ. ԳԵՂԱՄ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՓԱՇԱՅԱՆԻ
(1894—1986)

1986 թ. հունիս 26-ին խոր ծերության հասակին, Իրաքի Պաղտատ քաղաքին մեջ վախճանեցավ Տ. Գեղամ ավագ քահանա Փաշայանը:

Աշխարհական անունով Մովսես՝ ան ծնած էր 1894 թվին Սվեյտիո Հաճի Հապիպլի գյուղին մեջ: Ծնողքը եղած են հողագործ:

Սկզբնական կրթությունը գյուղի ծխական դպրոցին մեջ ստանալե ետք 1909—1916 աշակերտած է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանին, ապա որպես սարկավագ՝ միաբան եղած է Սրբոց Հակոբյանց վանքի. հետևած է Օրմանյան սրբազանի շրջանավարտ աշակերտերու դասընթացքին:

Ուսուցչական պաշտոններ վարած է Կիպրոս, Ֆրանսա և Դամասկոս: Քահանա ձեռնադրված է 17 սեպտեմբեր 1944-ին Դամասկոս՝ ձեռամբ Տ. Եփրեմ արքեպ. Տոհումնիի:

Իբրև հոգևոր հովիվ հրավիրված է Իրաք 1946-ին, ուր քառասուն երկար տարիներ ծառայած է Իրաքի հայության:

1946—1959 եղած է հոգևոր հովիվ Պասրայի Ս. Աստվածածին եկեղեցվո, ապա փոխադրված Պաղտատ: Ստանձնած է առաջնորդական տեղապահի պաշտոնը 1962—1965 և մարտ 1978—ապրիլ 1979 տարիներուն:

Իրաքի ժամանակակից առաջնորդներու միջնորդագրության հիման վրա՝ իր երկարամյա հոգևոր ծառայության համար, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա ամենայն Հայոց կաթողիկոսը պարգևատրած է Տ. Գեղամ քահանային 19-11-1958-ին լանջախաչ կրելու իրավունքով, դեկտեմբեր 1962-ին ծաղկյա փիլոն կրելու արտոնությամբ և 15-10-1968-ին ավագության աստիճանի շնորհաբաշխումով:

1984-ի մայիսին Տ. Գեղամ ավագ քահանա անցած է կենսաթոշակի:

Իրաքի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը Պաղտատի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցվո մեջ 29 հունիս, կիրակի օր, ս. պատարագի ընթացքին հանգուցյալի վերջին օծման կարգը կատարեց: Իր քարոզի ընթացքին սրբական հայրը վեր առավ լուսահոգի տեր հոր ծառայական ոգին: Սույն արարողության ներկա էին Գաղթեացվոց Պատրիարքը իր օգնականով, սիրական օրթոդոքս, սիրական կաթոլիկ և նեստորական համայնքապետները, հայ կաթողիկե համայնքի ներկայացուցիչը, Իրաքի վանական շրջաններու մեր եկեղեցիներու թաղականությանց անդամները և հոծ բազմություն մը:

Գերեզմանատան մեջ թաղման կարգեն հետո դամբանական խոսեցավ տոքթ. Պողոս Պողոսյան՝ ատենապետ Ազգային Կեդրոնական Վարչության:

Հետ հուղարկավորության առաջնորդ սրբազան հայրը ցավակցություն հայտնողները ընդունեց Առաջնորդարանի դահլիճին մեջ:

Տեր Գեղամի վախճանման գույժը հաղորդված ըլլալով Ս. Էջմիածին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը հղեց հետևյալ ցավակցական հեռագիրը:

«Խոր կսկիծով կարդացինք Ձեր հեռագիրը ի մասին Տ. Գեղամ ավագ քահանայի մահվան:

Կաղոթենք իր հոգվո խաղաղության համար: Մեր սրտագին ցավակցությունը փոխանցեցեք հանգուցյալի պարագաներուն:

Թող իր հիշատակը օրհնյալ ըլլա մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցավ»:

Տեր Գեղամ ավագ քահանա հավատարմաբար ծառայած է եկեղեցիին ու ժողովուրդին քառասուներկու երկար տարիներ:

«Հանգուսցէ Տէր զհոգի բազմամեայ պաշտօնէի իւրոյ ի լոյս երեսաց իւրոց»:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ